**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---


Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 30

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ. ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու 2021թ. թիվ 5 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

- ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Խ. ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Խ. ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Խ. ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Խ .ՊՈՂՈՍՅԱ/
- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.Խ.ՊՈՂՈՍՅԱՆ/

Կողմ -4 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 31

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ.-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 2-րդ մասի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Քարտեզագրման սխալի հետևանքով Մխչյան համայնքին որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված 03-059-0298-0009 կադաստրային ծածկագիրը կրող 0.03226 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հատակագծին համապատասխան:

3.Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Գույքի նկատմամբ սեփականությունը ենթակա է պետական գրանցման:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 32

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Մխչյան համայնքի վարչական տարածքում գտնվող Սարգիս Սողոյանին սեփականության իրավունքով պատկանող 03-059-0019-0002 կադաստրային ծածկագիրը կրող 0.1077 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությունից փոփոխել Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության / ջերմոց կառուցելու նպատակով/ :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 33

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Մխչյան համայնքի վարչական տարածքում գտնվող Ալբերտ Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 03-059-0273-0005 կադաստրային ծածկագիրը կրող 1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակությունից 0.5 հա փոփոխել Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության / սառնարան և ջերմոց կառուցելու նպատակով/ :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 34

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 5-րդ կետով ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Ելնելով անհրաժեշտությունից Մխչյան համայնքի 2021թ.-ի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Մխչյան համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/ գործառնական դասակարգման 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածից պակասեցնել 2652000 /երկու միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար/ դրամև հատկացնել

1.ա. Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրի /08.02.03.52/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին ավելացնել 1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար / դրամով, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին ավելացնել 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

1.բ. Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում ծրագրի /06.04.01.52/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին ավելացնել 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ , իսկ 5124 /նախագծահետազոտական ծախսեր / հոդվածին ավելացնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

1.գ. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրի /06.06.01.55/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին ավելացնել 47000 /քառասունյոթ հազար/ դրամ:

1.դ. Նախադպրոցական հաստատություններ ծրագրի /09.06.01.51/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին ավելացնել 5000 /հինգ հազար/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 35

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 42 կետով

Մխչյան համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը Մխչյան համայնքին մասնակցելու հետևյալ չորս սուբվենցիոն ծրագրերին.

1. <<Արարատի մարզի Մխչյան համայնքի Հ-8 հանրապետական նշանակության ավտոճանապարհի հետ հատվող փողոցների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ >>
2. <<ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքի փողոցների արտաքին էլեկտրական լուսավորրության ցանցի ընդլայնման աշխատանքներ>>
3. <<ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ>>
4. <<ՀՀ Արարատի մարզի Մխչյան համայնքի մշակույթի տան սան-հանգույցի,ջրագծի վերանորոգման,թեքահարթակի կառուցման, անձրևաջրերի ջրահեռացման կազմակերպման և 1-ին հարկի միջանցքների ներքին հարդարման աշխատանքներ >>

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**